№ 7 ՇԱԲԱԹ 22 ՓԵՏՐՎԱՐԻ 1875 № 7

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԷՆ 10 ՄԻՋԱԿ ՏԱՌԻ ՎՃԱՐՆ Է 1 ԿՈՊԷԿ:
Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով:

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԷՆ ՇԱԲԱԹ ՕՐ ՄԻ ԹԵՐԹ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 7 Ռ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
«Въ редак. газеты Пчела Арменіи»

ՈՒԹԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

FRANCE ET PAYS ETRANGERS

S'adresser pour les annonces et les abonnements a M. M. Bouêt et C-° (Office de publicité), 23 rue de Chaussée-d'Antin.

PARIS.

1875

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՐԱԳԻՐԸ

կը հրատարակուի շաբաթը մի անգամ

ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ, ՊՐՕԳՐԱՄՄԱՅՈՎ, 4 ԴԻՐՔՈՎ

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 7 Ռ.

Թիֆլիսում ստորագրվել կարելի է.

ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (պարոն Ս. Վարդանեանի տանը, հեռագրի կայանին կից, Վանքի Թաղում).

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ, որ գտնվում է պ. Հ. Ընֆիաճեանցի եւ ընկ. տպարանում (Գոլովինսկի պրոսպեկտի վերայ, բժշկապետ Մ. Ռօտինեանցի տանը եւ

պ. Համբ. Ընֆիաճեանցի ԾԽԱԽՈՏԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ (Դվորցովայի փողոցի վերայ, Գեներալ Արծրունու զալէրէյում № 3):

Օտարաքաղաքացիք թող բարեհաճին դիմելու ուղղակի խմբագրութեանս հետեւեալ հասցէով՝

Въ редакцію Армянской газеты „ПЧЕЛА АРМЕНІИ" въ Тифлисъ.

Խմբագրութիւնս խոնարհաբար խնդրում է այն անձանց, որոնք չեն վճարել մեր լրագրի բաժանորդագրութեան գինը, բարեհաճին շուտով ուղարկելու այն խմբագրութեանս:

ԹԻՖԼԻՍ 22 ԻՆ ՓԵՏՐՎԱՐԻ:

Մեր ազգային ուսումնարանների գոյութիւնը եւ նոցա մէջ մեր ապագայ սերնդի կրթութիւնը մայրենի լեզուով յանձնուած են մեր հոգեւոր իշխանութեան առանձին տեսչութեան եւ խնամատարութեան։ Մեր ազգի մանկութիւնը այդ սուրբ գործի մէջ ունի աւելի մեծ նշանակութիւն, որովհետեւ նոցա բարոյական եւ նիւթական հոգատարութիւնը թէ ամբողջութեամբ եւ թէ ներկայ դարուս կարեւորութեամբ անպայման կախ է նորա սրբազան իրաւունքներից: Ազգը իւր մասնաւոր տուրքերով յօգուտ ուսումնարանների եւ բարոյական մասնակցութեամբ պէտք է հոգայ իւր ուսումնարանների բարեկարգութեան եւ նորա մէջ ուսման կանոնաւոր ընթացքի մասին։ Եկեղեցին ընդունում է այդ ուսումնարանները իւր տեսչութեան տակ եւ խնամք է անում նոցա համար պատրաստել ուսուցիչներ եւ հմուտ դասատուներ: Ազգի եւ եկեղեցու փոխադարձ յարաբերութիւնը ուսումնական սուրբ գործի մէջ խոստանում է մեծ յառաջադիմութիւն մեր մայրենի լեզուով կրթութեան հարցին:

Եկեղեցական գումարները, որ գոյանում են ազգի տուրքերից, է գլխաւոր աղբիւր մեր ուսումնարանների յարատեւութեան համար:

Յիշեցնում ենք մեր ընթերցողներին Մեղուի անցեալ տարուայ 43 համարում տպուած մեր յօդուածը, ուր մենք քննած էինք ազգային ուսումնարանների նիւթական հարցը: Այն յօդուածի մէջ մենք ուշադրութիւն դարձրինք այն հանգամանքի վերայ, թէ որքան անբաւարար է մեզ յուսալ եկեղեցական գումարների վերայ եւ այդ աղբիւրի վերայ հիմնել մեր ուսումնարանական գործը: Երեւակայեցէք այժմ թէ ինչ կը լինի մեր ազգային ուսումնարանների գոյութեան գործը, եթէ այդ ազգից ստացած չնչին գումարը ժողովելը եւ օրինաւոր կերպով նոցա վերայ հոգս քաշելը վերաբերութեամբ կը լինին եւ զանցառութիւններ: Եկեղեցական գումարների կանոնաւոր հաշուապահութեան եղանակը տարաբաղդաբար դեռ մեր մէջ չէն որոշուած եւ այդ գումարների հետ մեր երեցփոխանները վարվում են, որպէս իւրեանց սեպհականութեանց հետ: Ի հաստատութիւն մեր խօսքի մենք հրաւիրում ենք ընթերցողաց ուշադրութիւնը մեր բազմիցս հրատարակած յօդուածների եւ այս համարում տպած Ախալցխայից ստացած պ. Սենեքերիմի գրութեան վերայ:

Ո՞ւմ մեղն է, որ ազգային փողերը, որով մենք պէտք է առաջ տանենք մեր մայրենի լեզուով կրթութեան սուրբ գործը, այդպէս ողորմելի նահապետական դրութեան մէջ են: Ո՞վ է պատասխանատու դոցա անդառնալի կորստեանը, ո՞ւմ պէտք է մենք դիմենք դոցա մասին բաւականութիւն ստանալու համար: Մեզ կը պատասխանեն, թէ ինքն ազգը, մենք էլ կաւելացնենք թէ եւ հոգեւոր իշխանութիւնը: Ողբալի է ազգը, որ միշտ սահմանափակ է հանդիսացել իւր սեպհականութեան մէջ, մեղաւոր են եւ մեր հոգեւորականները, որ պաղեցրել են նոցա մէջ համակրութիւնը դէպի ուսումնարան:

Եկեղեցին, որ այս բանին արտահայտում է մեր ազգային միութեան կապը, չը պէտք է թող տար իւր պաշտօնեաներին այդպէս սահմանափակ հանդիսանալու իւր հովուութեանը յանձնած ժողովրդեան հետ: Ո՞ւր են եկեղեցիներ ջերմեռանդութեամբ յաճախողները. ո՞ւր է այն ժողովուրդը, որ միայն իւր ազգութեան սուրբ գաղափարը պէտք է որոնէր եկեղեցու հաստատութեան մէջ: Նոքա հայեր են եւ չեն հայեր, որովհետեւ հայութեան հոգին մեռցրել է նորա մէջ մեր հոգեւորականների անտարբերութիւնը:

Մի՞թէ մի ազգի հովիւները, որոնք իւրեանց ձեռքի մէջ ունին ազգային կրթութեան գործը, պէտք է թող տան իւրեանց տեսչութեան տակ եղած ազգային գումարները երեցփոխաններին կուլ տալ եւ չառնելն ժողովրդեան կանոնաւոր կերպիւ հաշիւ պահանջել նոցանից: Մի՞թէ մի ազգի հովիւները, որոց տուել են ազգային ուսումնարաններ ունենալու իրաւունքը, պէտք է երկար խորհելով եւ ծանր ու բարակ մտածելով յանձնեն այդ ուսումնարաններ կամ թող տան նոցա մէջ անկարգութիւններին:

Այս ուրեմն ի՞նչու է մեր եկեղեցին ազգային եկեղեցի կոչվում եթէ նորա պաշտօնեաները ազգի հետ ձեռք ձեռքի տուած չընթանան եւ նոցա մէջ սէր դէպի եկեղեցին եւ համակրութիւն դէպի ազգային ուսումնարաններ չը պահպանեն:

Եթէ հոգեւոր իշխանութիւնը անտարբեր կը հանդիսանայ իւրեան յանձնուած պարտաճանաչութեան մէջ եւ այդ անտարբերութեան պատճառաւ ազգը եկեղեցիներ, չի յաճախել եւ երեցփոխանների պարտազանցութեան դէմ չի բողոքել ու ազգի եւ եկեղեցու ունեցածի կորստի առաջնառնելու դիտաւորութիւն չի ունենայ, այն ժամանակ եւ եկեղեցին էլ կաղքատանայ եւ այլ եւս միջոց չի լինի մեր ազգային ուսումնարաններ կարգաւորեալ եւ բարուոքեալ դրութեան մէջ պահելու եւ գումար չենք ունենալ այդ ուսումնարանների վերայ վերահսկող թեմական վերատեսչին պատշաճաւոր կերպիւ նիւթական բաւականութիւն տալու: Այս անխուսափելի իրողութիւն է եւ սորա առաջն առնելու մասին պարտք է մտածել նոցա, որոնց յանձնուած է մի ազգի մտաւոր եւ հոգեւոր բարօրութեան գործը:

ԱԶԳԱՅԻՆ

Նորերումս մենք բարեպատեհ միջոց ունեցանք տեսնուելու Բիրմանիայի կայսեր պալատական մեծ. պ. Մինաս Աղա Խաչատրեանի հետ:

Բիրմանեան Արեւելեան Հնդկաստանի նշանաւոր տէրութիւններից մինն է, ութը միլլիօն կռապաշտ բնակիչներով: Այդ կռապաշտ երկրում եւս Հայերը հարիւր տարուց աւելի է, որ բուն են դրել: Ներկայումս Բիրմանիայի մայրաքաղաքում՝ Մանդլէյում եօթանասուն հոգի հայ կան, որոնք մեծ յաջողակութեամբ պարապում են վաճառականութեամբ եւ պալատի մէջ նշանաւոր պաշտօններ ունին: Այժմեան կայսեր պապի ժամանակ՝ Գրիգոր աղա անուամբ հայ ազգի պարոնը Բիրմանիայի չորս մեծ նախարարներից մինն է եղած եւ այնքան մտերիմ կայսեր հետ, որ նորին մեծութեան եղբայր էր կոչվում: Փակաս հաշուած չէ եւ Սարգիս աղան, որ Անգլիայի արշաւանքից առաջ է Բիրմանիան մեծ գումար վասնելով իւր անձնական սեփականութիւնից:

Ընդհանրապէս Հայերը, թէեւ շատ փոքրաթիւ, սակայն մեծ պատիւ եւ վարկ ունին Բիրմանիայում: Հայոց քրիստոնէական հաւատն անգամ չէ արգելք այս հանգամանքին. այլ ընդհակառակն՝ ինչպէս որ մեծ յարգ են վայելում կռապաշտ քուրմերը, նոյն՝ յարգն եւ պատիւն վայելում են եւ Հայոց եկեղեցականները, ինչպէս նաեւ ամեն քրիստոնէից եկեղեցական պաշտօնեաները, մանաւանդ կուսակրօն հոգեւորական դասը, որովհետեւ իւրեանց քուրմերն եւս կուսակրօն են:

Զնայելով որ Բիրմանիայի ժողովուրդը հաստատ է իւր կրօնին, այնուամենայնիւ Անգլիական միսիօնարները կարողանում են տարածել քրիստոնէութիւն նոցա մէջ:

Հայերը չունին միսիօնարներ, բայց եւ այնպէս ցայժմ մօտ քսան հոգի Բիրմանացիներից ընդունել են Հայոց դաւանութիւն, ուսել են Հայոց լեզուն եւ գրագիտութիւնը: Հայերը այստեղ պահպանել են անարատութեամբ իրանց լեզուն եւ կրօնը:

Մի այդպիսի երկրում Հայոց եկեղեցականը մեծ գործ կարող էր կատարել: Բայց

ԳԱՒԱՌԱԿԱՆ

ՖԷԼԻԵՏՕՆ

(Ախալցխայից)

Բարեկամներիս ինձ տուած խորհուրդները. — իմ մտադրութիւններս. — նոր գիւտ. — հարստանալու տեսակ տեսակ աղբիւրներ. — Մի շաբաթում վաստակ 70,000 ռուբլի. — բանտայանկել սխրագործութիւններ եւ ախալքալաքցի պատգամաւորներ. — Հոգու՛ գողեր. — Ս. Ներսէս Շնորհալի — փափի հնազանդ որդի. — ազգասէր Քամանեանցը. —

—«Էլ ինչի ֆէլիետօններ չես գրում,» հարցնում են ինձանից բարեկամներս. —

—«Էլ ֆէլիետօններ մի գրիլ,» ասում են ինձ միւս բարեկամներս: —

Ինչպէս ընթերցողը տեսնում է իմ երկու տեսակ բարեկամներիս ինձ տուած խորհուրդները հակառակվում են միմեանց, թէ եւ ես համոզուած եմ նոցանից երկուսին էլ առ ինձ ունեցած անկեղծութեանը, սիրո բարեկամութեանը, բայց բանը նրանումն է, որ երկու տեսակ բարեկամներիս էլ առաջ բերած փաստերը, մինը ֆէլիետօններ գրելու մասին, միւսինն էլ չգրելու մասին, այնքան ճշմարիտ են եւ զօրաւոր, որ ես չեմ կարող մերժել ոչ մինի եւ ոչ միւսի խորհուրդը եւ մէջ տեղում մնացած եմ շփոթուած: — Ճշմարտութիւնը մի է եւ նա կամ մինի ասածի մէջ է կամ միւսի, այդ ես էլ լաւ եմ. կամ այն է որ ես այնքան ըմբռնիմ եմ, որ իսկական ճշմարտութիւնը որոշել չը գիտեմ եւ կամ այն է, որ իմ բարեկամներիս ասածներն եթէ սուտ չեն, գոնէ իսկական ճշմարտութիւնից հեռու են: — Բացատրեմ իմ միտքը եւ թող ընթերցողը դատաստանը կտրէ ինքը: — Իմ առաջին կարգի բարեկամներս ինձ ասում են, թէ գրականութիւնը մի ոյժ է, մի զօրութիւն է, որ մի օր չէ, մի օր անշուշտ մթութիւններ կը ջնջէ, կըսրբէ եւ այս անիրաւ աշխարհը մի օր մի դրախտի կը վերածէ: — Այդ ճշմարիտ է. իմ համոզմունքն էլ այդ իսկ է: — Երկրորդ կարգի բարեկամներս էլ ասում են թէ գրականութիւնը, մանաւանդ ֆէլիետօնականութիւնը, մի շատ յիմար բան է, ի զուր տեղը թշնամիներ ճարել է, առաջ գլուխը աւետարանի տակ դնել է «իմ կէլ աչնի դիմ» (չաքն սրի ինձ խամփ) ասել է, խաղաղ եւ անդորր կեանքը հալածանքի եւ բամբասանքի ենթարկել է, ամեն տեսակ պաշտօնից եւ մի կտոր հացից զրկուել է, եւ գուցէ մին օր էլ իսկ նահատակ լինել է: — Խոստովանում եմ, ընթերցող, որ այս էլ ճշմարիտ է, գուցէ ոչ ամեն տեղի համար, բայց Ախալցխայի համար խօմ աքսիօմ է: Հիմի դու արի էդը ցիւէմէն հանէ, այս երկու ճշմարտութիւններն էլ իբրեւ մարդ աչքի առաջն ունես, էլ ինչպէս երկրպատուէ մտածմանց մէջ չընկնես... — Բայց որովհետեւ շատ մտածելն էլ մի բան չէ, մանաւանդ իմաստունների ասութեամբ, մինչեւ անգամ վնասակար էլ է, ուստի եւ ես էլ պէտք է վերջ տամ իմ խորը մտածմանց, իմ այս անմիտ գիրքին եւ տեղեկութիւն տամ ընթերցողիս իմ վճռողականութեան մասին: — Ասացի եւ էլի կասեմ, իմ սիրելի, իմ մտերիմ բարեկամներս, որ ես վստահ եմ ձեր անկեղծութեան, համոզուած ձեր խորհուրդների ճշմարտութեան, ուստի եւ չեմ ուզում ձեր բարեկամական խորհուրդներից դուրս գամ, բայց ես մտածել եմ վերջապէս մի այնպիսի բան, որ երկուսիդ էլ սրտովն է միանգամայն: Ես կսկսեմ էլի ֆէլիետօններ գրել թէ աջ եւ թէ ձախ մարդիկներ չարժել, ապտակներ զարնել, մի եւ նոյն ժամանակ փոխանակ հալածուելու, բամբասուելու, թշնամիներ ճարելու, կը սկսեմ ամենից յարգուել եւ ինչպէս մի կուռք բոլոր ախալցխայցիներից պաշտուիլ:

Սրան էլ բան ունիք ասելու, ազբէր, դրանից էլ լաւ բան ինչ կայ «նէ չիչ եանամ, նէ քեպապ».— Այդ իմ նոր գիւտով ես ձեր ամենի խաթրն էլ կը շահեմ եւ մինչեւ անգամ Մեղուի անզգամներից մինի կամակոտութիւնը մի լաւ ծաղր կանեմ: — Հիմի արդ ասեմ ես ձեզ իմ միտքը, որ գիտենաք թէ ձեր կարծածի չափ տատամ չեն գաւառական չարչիները: —

Դուք գիտէք, պարոններ, որ աղքատութիւնը մի շատ յիմար բան է, աղքատին առաքինութիւնը անիրաւութիւն է, աղքատից յայտնուած ճշմարտութիւնը միշտ սուտութիւն է, աղքատին ամեն վարմունքը մեծ կոպտութիւն է, ճակատ քրտինքով մի կտոր հաց ուտելը աղքատին համար հարամութիւն է, մի խօսքով աղքատութիւնը ոտքից մինչեւ գլուխ եւ գլխից մինչեւ ոտքը սուտութիւն, խաբէութիւն, անիրաւութիւն եւ ամեն տեսակ ութիւն է: Իսկ ընդհակառակը հարստութիւնը եւ հարուստները, միշտ ազնիւ են, միշտ խելօք, միշտ յարգելի, միշտ համակրելի, երկրպագելի, նրանց շարժմունքներն էլ միշտ քաղաքավարի, անկրթութիւնները բարձր աստիճանի, անիրաւութիւնները խիստ արդարացի, բռնութիւնները դատախարակելի, գողութիւնները խնամարկելի, յիմարութիւնները փիլիսոփայական, տօպբաններին զուռը շատ խօճավարի եւ այլն ամենայն հանապազ ըստ կարգին:

Եւ եթէ այս այսպէս է. ինչի ես էլ չը դառնամ մի հարուստ իշխան ու գրչիս զօռ չը տամ, ամեն ութիւններ հանեմ երեւան եւ բոլոր ախալցխացիք, չնորհիւ իմ հարստութեան, այնուամենայնիւ փոխանակ թշնամանալու ինձ բարեկամ դառնան եւ քէֆիս խէր միշտ խմեն ու մեռ ծուխ տան: —

—«Այդ ամենը կը լինի շատ գեղեցիկ բան», հիմի գիտեմ ամեն կողմից հարցեր ինձ կու գան, բայց ինչպէս պէտք է ես հարուստ դառնամ, այս իսկ է բուն առարկան: —

—Էհ, պարոններ, դա չէ այնքան դժուար եւ անհնարին, այլ մի միջոց է հասարակ ու չնչին: —

—«Ի՞նչ, ուզում ես երեցփոխան դառնալ եւ եկեղեցու գումարներ կուլ տալ»:

—Ոչ, որովհետեւ թէպէտ երեցփոխանութիւնը շատ լաւ բան է, բայց հաշուետուութիւնն էլ անտանելի է, այնպէս որ մարդու անշարժ կալուածքը դրաւելը միշտ սպասելի է:

—«Ի՞նչ, ուզում ես վարժապետ լինիլ եւ մէկ ալէյիօն երկու կլայխօնով վեց հարիւր մանէթ ռոճիկ տանի բերի»: —

—Ճշմարիտ է էդ մէկը. շատ լաւ էր, բայց էն էլ վաղ էր, որ էդը կաղ էր, հիմի վարժապետութիւնն էլ մի բան չէ, վերատեսուչը միշտ գլխիդ կանգնած է, մի քանի տեսակ մատեաններով քեզ կաշկանդած է եւ ամեն օրուայ սերտած ու տուած դասերից համար հաշիւ կը պահանջէ, դեռ այդ էլ քիչ է, սեպհական ծախքովդ քեզ Թիֆլիս կը կանչէ եւ ամառն ու անտեղ անօթի ու ծարաւ ուսուցչական ժողովներում աշխատել կըստիպէ. իսկ եթէ մի դատարանում երեք բաժանմունք քեզ յանձնէ, այնուհետեւ էլ քո ճարը բոլորովին կտրուած է, սատանէն էլ այնուհետեւ այնտեղ գործ չունէ: —

—«Հա՛, իմացայ, ուզում ես սեղանաւոր դառնալ, Ախալցխայի կանանց «բօղմաները» գրաւ առնես. Թումէնին մի աբասի շահով փողեր բաժանես եւ երբ պայմանեալ միջոցը մի քանի օր անցկացնես, թանգագին գրաւները ծախես ու փորդ քաշես եւ խեղճերի մորհակները յետոյ հազար ու մէկ մաննաթով իրանց յետ դարձնես ու բերանները անուշ մեղր քաշես: —

—Հա՛, այ էդ մէկը լաւ բան է, միայն ցաւն

ցաւօք պէտք է ասենք, որ Մանդլէյի Հայոց եկեղեցւոյ քահանան ինքն անգրագէտ անձն է և բացի այն, որ գործ կատարելու շնորհ չունի, այլ և գործին վնասել կարող է անգամ իր տգիտութեամբ: Մեր հոգևոր իշխանութիւնը պէտք է մեծ ուշք դարձնէ այս հանգամանքի վերայ:

Արդարև, Անգլիացիք սիրելի չեն Բիրմանիայում, որովհետև նոցանից վախենում են Բիրմանացիք, մի գուցէ ժամանակին տիրապետեն նոքա իւրեանց բոլոր երկրին, ինչպէս որ մի փոքր ժամանակ առաջ տիրապետեցին Ծովեզերայ մասին երկու միլլիօն բնակիչներով (Մարտաբան և Արական):

Հայերը կարողացել են գրաւել Բիրմանիայի համակրութիւնը և Հայերից վախենալու տեղիք չունեն նոքա. ուրեմն մեծ ասպարէզ կայ Հայերի առաջ և մեծ պարտք հայ հոգևոր իշխանութեան վերայ հոգալու՝ կռապաշտ ժողովուրդը լուսաւորելու քրիստոնէական կենդանարար լուսով:

Հաղորդելով այս տեղեկութիւնները Բիրմանիայի Հայերի մասին, որ մենք լսեցինք մեծ. պ. Մինաս աղայից, դառնանք այժմ պարոնի ճանապարհորդութեան նպատակին:

Բիրմանիայի կայսրը վաղուց անտի փափագում էր բարեկամական յարաբերութիւնք սկսել Վեհափառ կաթուղիկոսի հետ: Այս նպատակով քանիցս անգամ Նորին Մեծութիւնը առանձին յանձնարարական նամակներ է տուած Հայ անցուորական քահանաներին Նորին Վեհափառութեան հասցնելու համար, բայց ոչ մինը նոցանից չէ կատարել իւր յանձնարարութիւնը: Նամակները տեղ չեն հասել — և ճանապարհածախքը, որ առատաձեռնութեամբ տուել է նոցա կայսրը, ապարդիւն են անցել:

Վերջապէս Նորին Մեծութիւնը որոշել է ուղարկել իւր պալատական մեծ. պ. Մինաս Աղային առ Վեհափառ կաթողիկոսն առանձին նամակով:

Նամակի պարունակութիւնը, ինչպէս նաև կայսեր դիտաւորութիւնը Նորին Վեհափառութեան հետ բարեկամանալու վերաբերմամբ, մեզ անյայտ են: Այսքանս կարող ենք ասել, որ կայսրը խնդրում է նշանակել Բիրմանիա մի բանիբուն հայ վարդապետ, որ ուսանելով Բիրմաներէն, կարողանայ միջնորդ լինել կայսեր և Վեհափառի յարաբերութեանց:

Վարդապետի ճանապարհածախքը, ռոճիկը, նորա ապրուստը, բոլորը յանձն է առնում կայսրը: Բացի այս նա խոստանում է մի գումար տալ Հայոց ճեմարան հիմնելու համար:

Մեծ. պ. Մինաս Աղան արդէն եղել է Ս. Էջմիածնում: Նորին Վեհափառութիւնը սիրով ընդունել է մեծ. պարոնին և համակրութեամբ կարդացել կայսեր նամակը:

Վարդապետ նշանակելու մասին Վեհափառ կաթողիկոսը խոստացել է կարևոր կարգադրութիւնք անել և արդէն պատուիրել է Սպահանու վիճակաւոր Սրբազան Գրիգոր եպիսկոպոսին, որ այցելէ Մանդլէյի հայերին և տեսակցի Նորին Մեծութեան հետ:

Մեզ մնում է յուսալ, որ Նորին Վեհափառութիւնը կնշանակէ արդարև մի անիբուն վարդապետ, որ արժանապէս կըվարէ իւր պաշտօնը և կկարողանայ գրաւել Հայերի, Բիրմանիայի կայսեր և ժողովրդի համակրութիւնը:

ԴԱԻՐԷԺ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրին)

Ազգաց և ազանց երջանկութիւնը զուգակշիռ է իւրեանց լուսաւորութեան չափին: Մի յաճախ փորձուած իրողութիւն է, որ այն ազգերը, որոնք դանդաղել կամ ծուլացել են ժամանակի պահանջմանց համեմատ ընթանալ, այլ յամառելով պինդ պահպանել և գրկել են իւրեանց նախնի վնասակար սովորութիւնքը և ուղղութիւնքը, միշտ կլանուել են ժամանակի անգութ ժանիքից և վերջ ի վերջոյ չքացել են, իւրեանց ասպարէզը թողլով այն ազգերին, որք աւելի խոհեմ դառնալով ջանք են անում ժամանակակից ոգւով յառաջ գնալ: Այդ բանը մենք Հայերս, փորձով շօշափում ենք մեր վերայ: Այն օրը, որ Հայը համոզուեց, լաւ համոզուեց, թէ իւր գոյութիւնը աշխարհի երեսին պահպանելու համար հարկաւոր է, այս անհրաժեշտ է, դէն ձգել և վանել այն ասիական բիրտ և գարշելի տգիտութիւնը, որ թոյլ չէ տալիս իրեն տեսնել լոյս ճշմարտութեան և գիտութեան, և յառաջ խաղալ ժամանակի հետ ի միասին, այն օրը—կրկնում ենք—կը բացուի Հայի վերածնելութեան գարունը:

Հայը իւր միակողմանի կեանքով չէ կարող զարգանալ, քանի որ նա սովորել չէ խորհել հասարակական գործերի վերայ: Շատերը զարմանում են, թէ ինչ պատճառաւ Լեհաստանի և Հնդկաստանի Հայերը աներևութանում են: Այդ երևոյթն մեք բնական բան ենք համարում, այլ դորա հակառակը մեզ պիտոյ էր զարմանալի թուէր, և ինչու այդպէս չը պէտք է լինի, քանի որ Հայը օտարների մէջ բնակելով, ամենևին հոգ չէ տանում իւր ազգային կենսական տարերքը պահպանելու, քանի որ նա իւր զաւակաց կրթութիւնը և դաստիարակութիւնը յանձնում է օտարների ձեռքը, օտար ուղղութեամբ և օտարի ոգւով մեծացնում է նորանց. անպատճառ սիրելով օտարներին, նա խորթանում է իւր հարազատներից, և հարազատներից խորթանալով նա կորցնում է և իւր մայրենի լեզուն, որ ազգային գոյութիւնը պահպանելու կենդանի և զօրեղ տարրն է: Բաւական է որքան ժամանակ ենք կորցրել, թող փոքր ինչ էլ շտապենք, խորհենք ապագայի վերայ, և անցեալի ու ներկայի փորձառութեանց վերայ հիմնուելով պատրաստենք մեր սերունդին մի բարեբախտ ապառնի: Անտարակոյս ուսումնարանները ամենազօրաւոր միջոցներն են այդ նպատակին հասնելու համար, բայց կրթութեան և դաստիարակութեան գործը դիւրացնելու և նոցա կատարելագործութեան նպաստելու համար, հարկաւոր է, որ ամենայն ուսումնարաններին կից կազմուին և հասարակաց ընթերցարանք, ուր ժողովուրդը կարող է առնուլ ընթերցասիրութեան ճաշակը զանազան պիտանի ու նպատակայարմար գրքեր ու օրագիրներ վերծանելով:

Մեր ազգային լրագրութիւնը ի վաղուց դրդել և զարթեցրել էր այդ կենսական հարցը, բայց ո՞վ է լսողը. ափսոս չէ՞ իմ երկու երեք մանէթս տամ և այն էլ ինչ կարդամ, մի անհամ հայերէն գիր կամ լրագիր, ասում է լուսաւորեալ Հայ հարուստը: Շատ լաւ բան կը լինէր, ասում է աղքատը. բայց ինչ կարող եմ անել, ես որ օրեկան հացս հազիւ եմ ճարում: Ամսեր և օրեր, տարիներ անցնում են և ժողովրդեան ցաւալի դրութիւնը ոչ մի փոփոխութիւն չէ կրում: Իսկ եթէ պատահում են մի քանի երիտասարդներ, որ սկսում և կազմում են այդպիսի ընկերութիւնք, նոքա էլ չգտանելով ոչ մի համակրութիւն և օգնականութիւն, այլ յաւէտ կրելով հնամոլների երեսից հալածանք և նեղութիւնք, շուտով հեռանում են ասպարիզից:

Արդէն յայտնի է ընթերցող հասարակութեան Դաւրիժու ազգային ուսումնարանի բարեկարգութիւնը, որ ոչ սակաւ ուրախութիւն է ամենիս համար, եթէ ի նկատի ունենանք այն աղիողորմ դրութիւնը, որին ենթարկուած է Ատրպատականի համայն Հայ ժողովուրդը կոյր տգիտութեան երեսից: Ի վաղուց մի քանի երիտասարդք փափագում էին մի ազգային ընթերցարան ունենալ, ուր կարողանային լրագիրների և գրքերի միջոցաւ մշակել իւրեանց միտքը. բայց զանազան անյաջող հանգամանքներ, կամ լաւ ևս է ասել անմիաբանութիւնը և Հայ հասարակութեան տարրացած տգիտութիւնը արգելք և խոչընդոտ էին այդ դիտաւորութեան և բաղձանքին: Բայց երբ Սրբազան Անդրէասը ժամանեց Դաւրէժ, և երբ ազգային ուսումնարանը այնքան անհաւատալի յաջողութեամբ վերակազմակերպուեց, միւս կողմից ինչպէս արդէն յայտնած եմ Մեղուի մէջ, Սրբազան Առաջնորդը յորդորեց երիտասարդաց ուսումնարանին կից մի ընթերցարան ևս բանալ: Այդ մտքով անցեալ դեկ. 1-ին, Հոգևոր Հայրը հրաւիրեց իւր մօտ 7—8 երիտասարդներ և ուշադրութիւն դարձնելով այդ խնդրի վերայ, այլ և պատմելով նորա օգուտները թէ ուսումնարանի և թէ առհասարակ ժողովրդեան համար, առաջարկեց կազմել մի յանձնաժողով, և յանձնել դորա կազմուելի ընթերցարանական ընկերութեան կանոնադրութիւնը խմբագրելու: Ուստի և ընտրուեցան պ. պ. Սամուէլ Գիլզադեան, Յակոբ Հաճեան, Համբարձում Կարապետեան և Հմ. Առաքելեան, որոց յանձնուեցաւ կանոնադրութիւնը խմբագրելու.

Յանձնաժողովը 5—6 նիստ ունենալէն զկնի խմբագրեց կանոնադրութիւնը և խնդրեց Սրբազանից ընդհանուր ժողով գումարել, կանոնադրութիւնը կարդալու և հարկաւոր եղած փոփոխութիւնքն անելու: Դեկ. 15 ին հրաւիրեցան 40 անձինք, բայց միայն 15-ը եկան, և դոցանէ 7 միայն Դաւրիժեցի, իսկ մնացեալները Տփխիսեցի, Պօլսեցի, Ղարաբաղցի, Ալէքսանդրապօլցի և այլն: Դաւրիժեցւոց այս սառն անտարբերութիւնը ոչ սակաւ տխրեցրեց մեզ, և գուցէ շատերը մեր տեղ տեսնելով այդ անյաջողութիւնը յետս կասէին, բայց մեք խրախուսելով Անդրէաս Սրբազանի այս խօսքերովը թէ „առաջ Պօլսում սահմանադրութեան ցանկացողք միայն ութ հոգի էին, իսկ այժմ բոլոր Տաճկահայոց մէջ տարածուել է՝՝ քաջալերուեցանք, և այն 15 անձը ընդհանուր ժողով համարելով կարդացուեցաւ կանոնադրութիւնը, որ զանազան դիտողութիւններից յետ ընդունուեցաւ և հաստատուեցաւ ժողովէն: Հուսկ յետոյ ժողովը դիմեց խնդրագրով Սրբազանին, և խնդրեց վերահաստատել և վաւերացնել, որ և կատարուեցաւ ուրախութեամբ:

Ահա այսպէս կազմուեց ընթերցարանական ընկերութիւնը Դաւրիժոյ մէջ. անօգուտ չեմ համարում կանոնադրութեան կարևոր կէտերը իմացնել համառօտապէս:

ա. Դաւրիժու Արամեան ուսումնարանի ընթերցարանական ընկերութիւնը կազմւում է Դաւրէժ քաղաքում հիմնադիր և բաժանորդ անդամներից ընդ հովանաւորութեամբ առաջնորդին Ատրպատականի:

բ. Ընկերութեան նպատակն է իւր նիւթական կարողութեան համեմատ ազգային և այլազգային լրագիրների և ընտիր մատեանների միջոցաւ ընթերցասիրութիւն տարածել Դաւրիժոյ հայ ժողովրդեան մէջ: Այլ և Դաւրիժու և Ատրպատականի մէջ գտնուած ուսումնարանաց չքաւոր ուսանողներին նիւթապէս և բարոյապէս օգտաւէտ հանդիսանալ, այդ նպատակով Դաւրիժու ազգային դպրոցի երկրորդ դասատան աշակերտների ընթերցարան գալը պարտաւորիչ պիտի լինի:

գ. Ընկերութեան հիմնադիր անդամները են նոքա, որոնք կանխիկ վճարում են մի տարուան բաժանորդագինը, այն է 12 մնթ. արծաթ: Իսկ բաժանորդ անդամ նոքա են համարվում, որոնք վճարում են բաժանորդագինը ամէն ամիս կանխիկ, այն է 1 կամ ½ ռուբլի արծաթ, իւրաքանչիւր ոք ըստ իւր կարողութեան: Իսկ այցելուները մուտք կը վճարեն:

դ. Ընթերցարանի մէջ կը գտնուին՝

1. Ազգային լրագիրներ—Մեղու, Մշակ, Արարատ, Հայկական Աշխարհ, Դպրոց, Մասիս, Օրագիր, Արևելեան Մամուլ և Արշալոյս:

2. 2 հատ Դգլ. լրագիր, 1 Ռուս. և 1 Պարսկերէն:

3. Զանազան պիտանի գրքեր. առաջին տարուան համար դէթ 130 հատ:

ե. Ընթերցարանի կառավարչաց ընտրութիւնն պէտք է լինի ընդհանուր ժողովից, որն որ կը բաղկանայ կանոնադրութիւն ընդունող և ստորագրող հիմնադիր և բաժանորդ անդամներից:

զ. Ընդհանուր ժողովը կընտրէ ընկերութեան կառավարութեան համար միամեայ պաշտօնավարութեամբ 1 ատենապետ, 2 գրագրանապետք և 1 գանձապետ, ո-

---

այն է, որ գրպաններս բոլորովին դրամագլխից զուրկ է, իսկ սեղանաւորութեան գլխաւոր պայմանն է, նախ պէտք է հարիւր հազարիկ մանէթ տաս, որ երեքհարիւրնոց դրաւ առանաս: —

—«Բաս ուզում ես մի հարուստ աներ ունենամ, մեծ գումարով մի աղջիկ ուզելու դուրս գաս և այդ նոր մօդան Ախալցխայումն էլ ընկնելուն փառքը դու ստանաս:—

—Աստուած մի արասցէ. իմ միտքը բոլորովին այդ չէ, որովհետև առաջին՝ որ ես աղապ չեմ. երկրորդ՝ որ եթէ այդ բանը ես Ախալցըխայում կանեմ անեմ, յետոյ իմ աղջիկներս տանեմ ջուրը ձգեմ. ինչ է, թէ փող չունեմ, որ նրանց համար փեսացուներ ճարեմ, ճանկեմ: —

—«Եթէ այդպէս է. ուրեմն ուզում ես կեղծ թղթադրամ բերես կամ քանդրաքանդութիւնով մեծ գումար դիզես:

—Ես այդ կանէի, եթէ որ պ. Ա… մօրեղբօր պ. Աստուածատրի քաջութիւնն ունենայի, իսկ քանդրաքանդութիւնը այն ժամանակ կը թոյլատրէի, եթէ որ ոչ թէ Ախալցխայի նոր մասում, այլ հին քաղաքում ես տուն ունենայի: —

—«Հա, հա, հիմի իմացայ դու ուզում ես կապալներ վերցնես և մի քանի տարում միլիօններ դարես: —

—Վա՜հ, գժուել ես, ինչեր ես ասում, հէնց կարծեցիր, թէ պ. Թ...... կը լինեմ ես:—

—«Բա՞ս ուզում ես թղթախաղում քեզ փորձես. ինչ տղայ ես, հէնց ուզում ես ձեռաց հարուստ լինես:

—Դրուստ է. ես այդ մտքումս ունէի. բայց հիմի զմբաղզրաչար Ախալցխայում քլուպ է, որ կը սարքուի. իսկ քլուպներումը, պէտք է որ ամենքդ էլ յայտնի լինի, բաղդի խաղ խաղալն տեղիք չունի: — Ուրիշ բան է, եթէ Սթամբօլում լինէի և վերջին օրերում այնտեղ 10,000 վերայ տանուլ տուող զէվզէկ էֆէնտիին երջանիկ պարտատէրը անպատճառ ես կը դառնայի և այն էֆէնտիին Էրզրումի պատուական կալուածներին տէրը հիմայ ես եղած կը լինէի: —

—«Եթէ այդպէս է. ուրեմն ուզում ես դառնաս փաստաբան: —

—Ախալցխայում, պարոններ, Ջէլօկյալ և Վախվախով Վրացի իշխաններ չը կան, որ փաստաբաններին սարքիներով ռոճիկ տան: —

—«Վա՜հ գժուել ես. ինչ է, էս չէ, էն չէ, բաս ինչ ղուխում ես: —

—Լաւ է մի չարանաք, թէ Աստուած կըսիրէք, ինքս հիմի ձեզ կասեմ, լսեցէք: — Միայն եթէ աղբեր էք իմ ընթացքին դուք էլ է հետևեցէք: —

Այո պարոններ, ուզում եմ վերջ տալ իմ չարչիութեան և ձեռնամուխ լինել վաճառականութեան: Կը տեսնեմ իմ բոլոր հաշիւներս և որպէս զի ոչ ոք չիմանայ կոտրացած լինելս, կը փոխեմ ասիական չուխաս, կը հագնեմ եւրոպ. մախմուրէ ժիլէտ, շխաքի ու թաթմաններով կը սարքեմ գլուխս ու ձեռքերս, մաշացուցութեան կը տամ փոքր ինչ կուօլի նման կոտրատելս և Թիֆլիզում խաղոյն հրապարակ կուգամ ես: — Թիֆլիսցիք, որքան ճարտար էլ լինին, որքան ուզում են կուօներին ձրանք թող չը հաւանին, ես կկլիկեմ նրանց ամենքին էլ քնթերնին և կը մանեմ քարխանաչյի Թամամշևին: Այնտեղ կը տեսնեմ գունդագունդ չարուած զէնք, որոնք սովորականի պլեխի նման մաշարի են պատում ճըրագը ձեռքին: — Դրանց մէկին ես կըշարեմ իմ մակամնուցով, 20 հազ ապրանք կ'առնեմ չորս ամիս ժամանակով, միւսին կը յիմարացնեմ իմ օղից կախուած ղիւզէրով, 40 հազ կը կապեմ չեթ ու մահուամբ նոյն ժամանակով, երրորդին կ'ասեմ քու աղջիկդ կառնեմ 10 հազ կատուով, չորրորդին ինձ կը խաբէ 3000 մանէթի կլապիտոններ 7000 մանէթի ջանիս քաշելով տասն և մէկ ամսով և ահա մի չաբաթում զգալիս լցուեց 70000-ով: Ուզ մնայ այնուհետև երկաթուղին, ապրի նրա հնարող, մի օրում բոլոր ապրանքներս Ախալցխայ կըլինին ձեռքս քով, իր անուանական մարքայով իսկ ես Ռույթին, չոզինուորի զինը անտնին, կեանքը օրհնելով, ուղի կընկնեմ Եւրոպայ փոթեւ վրայով և Մեղուի էջերը կը լցնեմ անդադար ֆէլիէտոններով: — Կը զարմանայ բոլոր Ախալցխան ինձ վերայ և իմ վիճակի այս տարօրինակ փոփոխութիւնը մի երկրային Փրիստոսատուր պարգև կը կարծէ նա և իմ ֆէլիէտոններից նա էլ չի զայրանայ. պատճառ որ նրանց գրողն էլ չի լինի այնուհետև մի աղքատ չարչի, այլ մի մեծատուն, մի հարուստ իշխան Հայազգի, որ իւր հարստութեամբ այնուհետև միշտ կարող կը լինի, իւր դէմ խօսողի քիթն ու պռունկը ջարդ ու փշուր անի:—

Միայն քանի դեռ իմ այս պլաններս չեմ գործադրել, քանի Թիֆլիզ գնալու ճանապարհածախք դեռ ես չեմ գտել, պատիւ ունիմ իմ ընթերցողներիցս խոնարհաբար խնդրել, այս բանս առ ժամանակ խոստովանք պահել, խըմբագրութիւնից էլ խնդրում եմ այս իմ ֆէլիետօնս չը հրատարակել. քանի որ Ախալքալակցի պատգամաւորները Էջմիածնից չեն վերադարձել և նրանց մէկից ինձ հասանելի երկու հարիւր ռուբլին տակաւին ես չեմ ստացել: Այս էլ իմ մեղն էր, ինչ արած, որ երբ մի այդպիսի երևելի խորհուրդ իմ մէջ էր յղացած, իմ պարապմունքը իւր բանն ու գործը թողած և իրեն նման խելօքներին էլ իւրեան հետ առած Էջմիածին են գնացած:

Չը գիտեմ որքան կը յաջողեն Ախալքալակցի պատգամաւորները, բայց ես կարծում եմ, որ աւելի լաւ կանէին նոյն ջերմեռանդ ազգասէրները, թողնել ուրիշներին՝ թողել իրենց մեռելը և մի մարդոյ պատճառով այդքան չը խառնէին իրենց տաք արիւնները, չը վրդովէին իրենց առ մնին և հասարակաց հանգստութիւնները, ապա թէ ոչ իրանց տաքգլխութիւնից կարող են օգուտ քաղել ուրիշները և ձըգելով իրանց թակարդները եղանել իրենց ցամաք լղրուձները, մարմիններուն հետ կորցնել միանգամայն և հոգիներ...... — Պէտք է գիտենալ, սիրելիք, որ հոգու գողութիւնը մեր ժամանակում մոդայ եղել է և այնքան շատացել է, որ ոչ մարդիկներով միմիայն չըբաւականանալով, հարիւրաւոր տարի յառաջ մեռնողներին էլ յետևից ընկել է և նրանց հոգին ափշտակելու մեծ ջանքեր կանէ: — Օրինակի համար մեզանից ոմն է կասկածում, որ Սուրբըն Ներսէս մեր Շնորհալին, մարմնով և հոգւով կատարելապէս էր Հային, բայց ահա նա էլ չնորհիւ բազմահմուտ Հ. Ղևոնդ Ալիշանին, քիչ է մնում խոնարհ ծառաներից մինը եղած լինի Հռովմայ փափին, այսպէս ես հասկացայ գովեստ Ալիշանեանի «Շնորհալի և պարագայ իւր» նշանաւոր գրքին: Դեռ Ալիշանը մի կողմը մնայ, Եդուարդ Հիւրմիւզեանն էլ է դեռ երեխայ, որ հանրածանօթ ծթուած գաղափարին կանգնել է կրկին զրուցներ կուտայ, ինչ կասէք հապա պարոն Ա. Ս...եանցին, որ ուզում էր վերջին օրերում փրկիչ լինել Աղեքսանդրապօլի վիճակային դպրոցի աշակերտների մոլորեալ հոգիներին, ինչ է, թէ Պօլսոյ բողոքական ընկերութեան կողմից նրան նշանակած աւրեկան 1200 ռուբլին, ծառայած լինէր իւր բուն նպատակին. Էլի փառք ու պատիւ Պօլսոյ Քամամեանցին, որ ՝ազգի վերաբերեալ գործերում իւր սեպհական շահն չունէ աչքի առաջին և իւր դարզը թողած ՝ու ինքը Թիֆլիզում նստած, հոգում է Ախալցխայի աղքատների մասին և զօռ է տալիս իւր զրպարտ գրչին, ինչպէս և որ կողմից որ փչում է քամին...

Թոխմախ.

րոց պարտաւորութիւնքն կայանում են ծխ. ծխ. ծխ. կանոնաց մէջ։ Այս 4 պաշտօնեայքը կը կազմեն ցնօրէն ժողով։

Բոլոր կանոնադրութիւնը 20 յօդուած է, որ երկարութեան պատճառաւ չը կամեցայ դնել այստեղ։

Բայց որովհետեւ մի գործ յառաջ տանելու համար հարկաւոր է և նիւթական կարողութիւն, ուստի Սրբազան Անդրէասը հանդիսականաց օրինակ լինելու համար անմիջապէս ստորագրեց հիմնադիր անդամ ընկերութեան։ Նորին Սրբազնութեան հետեւեցին և Մնացեալք։ Այժմ ընկերութիւնը ունի 15 հիմնադիր և 7 բաժանորդ անդամք։

Երկրորդ անգամ, յԹ Յունվ. 19 ին ընդհանուր ժողով գումարուելով, ընտրուեցան ընթերցարանի կառավարիչքը բազմութեամբ ձայնից.

Յեսուչ — պ. Յակոբ Հաճեան։— Գրադարանապետք պ. պ. Աղէքսանդր Խորդեան և Համբարձում Առաքելեան։— Գանձապետ առժամանակեայ պ. Յարութիւն Խուդավերդեան։

Այս առթիւ խնդրվում է մեր Ռուսաստանի եղբարց ամէն հեղինակներին և Թարգմանիչներին, որ բարեհաճեն իւրեանց գրքերից մի մի օրինակ յղել ընթերցարանին, Սրբազան Առաջնորդի անուամբ, որպէս զի ընկերութիւնս կարողանայ տեղեկութիւն ունենալ, թէ որ գրքերը աւելի յարմար են իւր նպատակին։

Համբ. Առաքելեանց.

ԴԱՂՍԹԱՆԻ ԱՂԲԱՐ

Իմ խղճմտանքի զրոյն հրամանքիդ գրել էի թէ մեր սուրբ եկեղեցւոյ փարան աստր անոր ձեռքը հաշուրներով քանի տարիներէ ի վեր կորսուի կը երթայ։ — Օրերը լսեցի, որ հիմիկուան երեցփոխանին վրան ալ 8000 մանէթ մնացած է եղել։ — Զօ՞ զանիմ, աս ի՞նչ անաէրութեն, աս ինչ անամօթութեն է, թէ՛. խեղճ հասարակութենը իրեն արուն քրտինքով վաստըկած մէկ մէկ փարաները թափ կենէ կը, որ աս մեր դեօղին սէփէրիմ երեցփոխան ազնները փաք փառաւոր ասմին զափթրմիշ էնեն զա՞ր, հըմը ես հրամանքիդ աս ալ բսեմ, զաղէթածի աղբար, որ ես ու իմ Աստուծոյ աս աներես մարդիկը ինչ որ կենեն իրենց կենեն. ժամին հէչ բան չի ըլլի, ան ժամը կենայ կայ ու կը մնայ, հըմը ժամին փարաներն ուտողն մարդ չի ըլլի, զուպակու կըլլի, ատոր հազար ու մէկ օրինակներն աչքովս տեսած եմ. — Աս ըսելով հիմի ես չեմ ըսեր թէ մեր ժամին փարաներն ալլահ հալալ թողնենք երեցփոխաններուն ձեռքը, տիոր աս օրս ինչ որ եղան է, հերիք, խեղճ, ես կըսեմ թէ, զաղէթածի աղբար, աստից ետեւ իսի անիկս մէ զէյթէմ գրուի, որ ժամին փարաները աստր, անոր ձեռքը չըլնին, ըշտը աս բանին համար ես իմ խորհուրդս կու տամ իմ Ախալցխացի աղբարցս։

Առաջինը հրամանքիդ, զաղէթածի աղբար, լաւ մէկին է, որ տիօր սասր մեր երեցփոխանները առանց հաշիւ ծառայէին կը եկեղեցւոյ, անոր համար ալ ըշտը փարաներուն գըլխն ալ օրը մէ զեզէմ զուզար, ես կըսեմ թէ լաւ կըլլի, որ մեր հասարակութենը խորհուրդ ընէ մեր հոգևոր տէրոջը հետ, որ ասոր ետեւ ժամին երեցփոխաններուն տարեկան հախ գրուի, որ ետեւ գլխուն զարնես աշխ. պահանջես։ Աս հախն ալ ես մէ որոշուած չափաւոր գումարըմ ըլլի, ես թէ չէ եկեղեցւոյ միւլքերին, եկամուտներին, հարրին քանի մը մանէթ բաշխեն, անպէս որ երեցփոխանը, որքանոր շատ աշխ. ունենայ միւլքերուն վրայ, որքանոր շատ եկամուտ ներս բերէ, անքան աւելի հախ առնէ։ — Անդէն ետեւ էֆէնտիմ երեցփոխանին նէ զրաշրի փարայ տրուի, նէ օջնախանի, նէ զէֆի, նէ թութունի փարայ, ոնն որ հիմի, տարեկան երեք չորս հարուր մանէթ կըլլէ։

Երկրորդ՝ որ երեցփոխանը եկեղեցւոյ զաթին մէջ իրեն համար մէ պզտի քանթօրմ ունենայ ու միւլքներուն ու չարսուներուն մէջ խանութ չը բանէ, որ աւելորդ քիրեներ տայ։

Երրորդը՝ որ երեցփոխանին փողին սընտուկը հոգևոր կառավարութեան մէջ ըլլի ու ամեն ժամանակ հոգևոր կառավարութեամբը, երեցփոխանին իրեն և հասարակութենէն ընտրուած չորս մարդկանց վէքալէթներով փակուած լինի, առանց աս երեքին խորհրդեանը և գիտութեանը մէկ փարայ չը խարձուի, ու թէ որ հաշիւներուն միջէն մէ պակասութենմ ես մէ խարդախութենմ դուրս եկաւ նէ, աս երեքին պոչէն զայիմ բռնուի ու մնասը օհտաթին առնուի։

Չորրորդ՝ որ երեցփոխանին ձեռքը ես շատ շատ հինգ հարուր մանէթէն աւելի նաղտ փարայ չը գտնուի, աւելցածը թաղարին խէզնէն շահով տրուի։

Հինգերորդ՝ որ առանց օրինաւոր գործնական թղթերու, առանց օրինաւոր թուղթ ու գրի, կանտրակտի մէ քօռ քարբէկմ ծախս չըլլի։

Վեցերորդը, որ ինչ շինութենն որ պատահեցաւ եկեղեցւոյ համար ընելու թէ որ հինգ հարուր մանէթէն շատ բանելու եղաւ, թօրկով գրուի ցանկացողներու, ասոր անոր ձեռքովն ես փանոր չըշինուին, որ վէրակացուներն համ ժամին փարաներն ուտեն, համ հասարակութեան վըրայ հազար ու մէկ մինէթներ բառնան։

Եօթներորդը, որ ամեն տարի մութլախ երեցփոխանին հաշիւներն քննուին, քանի մը տարուան հաշիւներն թօփ չըլլի, որ ետեւ թօփ եղած ջրի պէս հոսի ու գէշ հոտեր հանէ։

Ութերորդը, որ աս կանոններս մէկ կամ մէկալը պօզմիշ էնողը օհտաթին իրեն պաշտօնէն վռնտուի։

Ըշտը ահա ասոնք են, զաղէթածի աղբար, իմ խորհուրդներս։ — Խնդրեմ կը հրամանքիդմէնէ, որ ասիկս մեր ախալցխացի աղբրտիք իմանան, խելք խելքի տան մէկէքիմ բանը գլուխ գայ, թէ իրենց ժամին փարաները ամեն տարի չէրփէկ չըլլի, համ մէմ ալ վըրնայ իրենց միջէն ամեն տեսակ կռիւներն ու զալմաղալներն, որ միշտ և հաւասպաղ երեցփոխաններու հաշիւներուն ժամանակը կըլլէ և սաղ տարիներ կըքաշէ։

Սէնեաթեքիր։

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ

Կարդալով Մեղուի մէջ Փոքր Ասիայի սովալլուկների թշուառ վիճակի մասին, մեր քաղաքի մի քանի բարեսիրտ անձինք խղճալով իրանց եղբայրակիցների դրութեան վերայ՝ նըվիրեցին անցեալ յունվար ամսին 54 ռ. 20 կ. և խնդրեցին ինձ հասցնել ձեր յարգութեանը ուղարկելու այդ գումարը վերոյիշեալ խղճալի սովալլուկներին, որ և ահա սուրբ պարտականութիւն եմ համարում կատարել այս յանձնարարութիւնը՝ ներկայացնելով սորա հետ և նուիրատուաց ազգանունները։

Գևորգ Ջիթողցեանց (երկու գեղին մէջիտիյ) 13 ռ. 30 կ. Առաքել Դիմեանց 6 ռուբլի, Գրիգոր Ռափայէլեանց 5 ռուբլի, Հայրապետ Ղուկասեանց, Սահակ Երամեանց և Յարութիւն Քարտաշեանց 3-ական ռուբլի, Մահտեսի Մկրտիչ Սէյլանեանց, Սարգիս Բէգ-Նազարեանց և Մահտեսի Մկրտիչ Բաբայեանց 2-ական ռուբլի, Յովհաննէս Լալայեանց, Աբնիքերիմ Լալայեանց. Թադէոս Տիգրանեանց, Նիկոլայ Կանչելի, Կարապետ Ջանիբէկեանց, Արամ Մատայեանց, Աղաբէգ Արշակունի, Յովհաննէս Քիւրքչեանց, Գաբրիէլ Յովհաննիսեանց Վարոս Հիւրմիւզեանց, Յարութիւն Յովհանջանեանց մի մի ռուբլի, Ալահվերդի Աղաբէկով, Մկրտիչ Արարաջեանց, Բարսեղ Տէլուբեանց, Աղաբէգ Ամիրեանց 50-ական կոպ. Յովհաննէս Զիկարդեանց, Յարութիւն Խոզբաշեանց, և Գաւիթ Սարօյեանց 25 ական կոպ. Պետրոս Պօղոսեան, Վարդան Յարութիւնեան, Գէորգ Քալանթարեան, Մնացական Բարաջանեանց, Մահդեսի Յակոբ Կարապետեան, Մովսէս Սիմէօնեան և Աւետիս Աթոյեան 20-ական կոպ. Մովսէս Աւետիսեան, Աղաջան Խաչատրեանց և Գէորգ Յովհաննեան 15-ական կոպ.

Ընդամէնը՝ հանելով փոստայի ծախսը, յիսուն և չորս ռուբլի քսան կոպէկ։

Գ. Յոհաննիսեանց.

Այս համարում տպում ենք ցուցակ Աղեքսանդրապոլու նուիրատուաց յօգուտ Փոքր Ասիոյ սովալլուկ մեր եղբարց։ Սորանով նոյն նպատակի համար խմբագրութեանս ստացած փողերի գումարն է ընդ ամենը 174 ռ. 20 կ. և պ. Հ. Ընֆիաճեանցի միջնորդութեամբ 280 ռուբլի։

Ցրչեալ 54 ռ. 20 կ. ևս խմբագրութիւնս յանձնեց պ. Ընֆիաճեանցին՝ անյապաղ տեղը հասցնելու։

—

Լսում ենք, որ Նորին Վեհափառութիւնը շարժած հայրական գթից դէպի մերազգի սովալլուկները Փոքր Ասիայում, շրջաբերական կոնդակ է ուղարկել ամեն վիճակներ հանգանակութիւն անելու համար յօգուտ նոցա։

—

Խմբագրութիւնս ստացաւ Պետերբուրգից պ. Պարոյրի ստորագրութեամբ մի յօդուած, ուր այնտեղի վերջին ներկայացման առթիւ մանրամասնաբար նկարագրած են այն ամենայն հանգամանքներն եւ դէպքերը, որ տեղի են ունեցել ուսանողների մէջ երկու տարուայ միջոցում, մինչեւ որ գլուխ կը բերէին այդ ներկայացումը:

Յօդուածի պարունակութիւնն է ուսանողների անմիաբանութիւնն եւ կուսակցական ոգին այդ տեսակ գործառութեան մէջ:

Ո՞ր չը կայ մեր մէջ անմիաբանութիւն, ուր երկու Հայ, անդ կռիւ եւ վայ, այս է մեր ճակատագիրը:

—

Մեզ Պետերբուրգից յայտնում են, որ այնտեղ պ. պ. ուսանողները կամենում են թարգմանել «Էրկման—Շատրիանի գիւղացւոց պատմութիւն» երկասիրութիւնը և այս պատճառաւ հարցնում են թէ արդեօք թարգմանած է կամ թարգմանվում է այդ երկասիրութիւնը հայերէն։ Մեզ որքան յայտնի է Էրկման—Շատրիանի այդ երկասիրութիւնը ոչ Ռուսաստանում և ոչ Տաճկաստանում դեռ չէ թարգմանված, այլ թէ թարգմանվում է թէ ոչ՝ այդ մենք չենք կարող ասել։

—

Այսօր երեկոյեան Գերմանական կլուբի դահլիճում Հայ դերասանական խումբը կը ներկայացնէ բարեգործական նպատակաւ վերջին անգամ «Թուղթ խաղացողի կեանքը»։

Յուսով ենք, որ մեր Թիֆլիսեցի Հայ հասարակութիւնը չի թողնիլ առանց իւր այցելութեան այդ ներկայացումը. նա մանաւանդ որ բարեգործական նպատակը պէտք է յարգելի լինի ամենքին։

ՆԵՐՔԻՆ

Ինչպէս յայտնի է քաղաքային վարչութեան ներքին կազմակերպութիւնը իրաւասուների ժողովը վճռեց յանձնել վարչութեանը սահմանել և ապա ներկայացնել ժողովին ի քննութիւն և ի հաստատութիւն։ Մեզ լուր է հասնում այժմ, որ քաղաքային վարչութիւնը մտադիր է իւր ապագայ կազմակերպութիւնը այնպէս սահմանել, որ որոշեալ 42 հազար ռ. գումարը բաւականանայ բոլոր պաշտօնատարների ռոճիկի համար։ Այս պատճառաւ վարչութեան կազմակերպութիւնը շատ սահմանափակ կը լինի և քաղաքային գործերի կատարողների թիւը պակաս կը լինի, որովհետեւ այդ գումարից արդէն 3 հազար ռ. ինչպէս յայտնի է ընթերցողին, ժողովի վճռով աւելացաւ վարչութեան անդամների ռոճիկին։

Վախենում ենք մի գուցէ սահմանափակելով այդպէս վարչութեան ծառայողների թիւը, արգելք առաջացնեն դորանով գործի շուտափոյթ կատարման և զանազան տնտեսական կարգադրութեանց իրագործելուն։ Խորհուրդ ենք տալիս վարչութեան առատութեամբ սահմանել իւր կազմակերպութիւնը, ապա թէ ոչ յետոյ տեսնելով ծառայողների պակասութիւնը նորից կը դիմէ իրաւասուների ժողովին նոր գումար նշանակելու խնդրելով, ինչպէս այդ նախադասակից իրաւասու պ. Բէյաթէրը։

—

Ամսոյս 17-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեան նորընտիր անդամները երդուեցան և մտան իւրեանց պաշտօնի մէջ։

—

«Рус. Міръ» լրագրի խօսքերով Պետերբուրգի քաղաքային խորհրդարանի քննութեան յանձնվել է պ. Բ...ի ծրագիրը ծխական բանկաների հիմնելու մասին, փոքրիկ գումարներ պարտամուրհակի և առձեռն գրաւականի երաշխաւորութեամբ տալու համար։ Այս բանկերի դրամագլուխը պիտի կազմուի անդամների տարեկան բաժանորդագրամներից։ Առանց ուրիշի երաշխաւորութեան, լոկ անձնական պարտամուրհակով նախադիծը ներում է տալու գումար միայն ընկերութեան անդամներին, իսկ պարտամուրհակով ուրիշի երաշխաւորութեամբ կարելի է տալ գումար անդամ չեղողներից միայն նրանց, որոնց վերայ վստահ է բանկայի վարչութիւնը, որ բաղկանում է ծխական քահանայի նախագահութեամբ չորս բազմութեամբ ձայների ընտրած անձինքներից։ Վերջապէս գրաւականով կարելի է տալ դրամ նրանց, որոնք կը դիմեն միայն բանկային։ Նախագծի զօրութեամբ իւրաքանչիւր բանկա պէտք է կազմէ առանձին հաստատութիւն։ Ծխական բանկերի գլխաւոր վարչութեան գործը պիտի լինի միայն հաշուեպահանջութիւնը նորանցից։

—

Փորուց գրում են «Голосъ» լրագրին, որ այնտեղի բերդում բանտարկուած աւազակութեան և այլ յանցանքների համար Կովկասում յայտնի իւր չար գործերով յանցաւոր Իլեան Իլիա Փալավանդովը գիշերով փախել է բերդից, խաբելով բերդի պահապաններին և բերդի կառավարչին։ Գնութիւնից իմացուեցաւ, որ այն սենեակը, ուր բանդակուած էին ժամանակաւոր կալանաւորները բարձր դասակարգից, կառավարչի կարգադրութեամբ գիշերով չէր փակվում և կալանաւորներին թոյլ էին տալիս ցերեկով ազատ դուրս գալու սենեակից յայտնի կարեւորութեանց համար։ Օգուտ քաղելով այս հանգամանքից, Իլեան Փալավանդովը եւ գիշերով փախչելով բերդից, գնացել է մօտակայ գիւղում ընթրելու և այնտեղից անյայտացել է և մինչև ցայսօր դեռ չէ բռնված։

—

«Моск Вѣд.» լրագիրը լսել է, որ Պետական խորհրդարանին ներկայացրել է ներքին գործոց նախարարութիւնը տարափոխիկ հիւանդութեանց համար միջոցներ գտնելու և այդ հիւանդութեանց ժամանակ հիւանդանոցներ հաստատելու մասին իւր նախագիծը։ Հաստատում են, իբր թէ մտադիր են, ի միջի այլոց, պարտաւորել քաղաքներին հաստատել մշտական հիւանդանոցներ տարափոխիկ հիւանդութեանց համար։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ.

— Փարիզ. Վալլոնի սահմանադրութիւնը ընդունվելուց յետոյ, Հանրապետութեան հարցը մի փոքր առաջ գնաց ցայսօր թէ կառավարութիւնը և թէ ազգային ժողովը նախադասում էին անորոշ դրութիւնը և խուսափում հանրապետութիւնից։ Նոյն հայեացքի էր ազգային ժողովը և սահմանադրութեան—օրէնքների քննութեանը ձեռնամուխ լինելու ժամանակ—երբ Լաբուլէի առաջարկութիւնը՝ հանրապետութիւն հրատարակելու մասին մերժվեց նա։ Չը կարողացան միապետականները իւրեանց ուխտութիւնը յայտարարելու և յաղթութիւնը տօնելու, աչա նոյն ազգային ժողովը ընդունում է Վալլոնի սահմանադրութիւնը առաջին կէտը մի ձայնի առաւելութեամբ իսկ երկրորդը հարիւր և ութսուն ձայների բազմութեամբ։

Որքան որ ծաղրածութեան պատճառ կարող էր լինել մի ձայնի առաւելութիւնը սկզբում, այնուամենայնիւ նորա հետեւանքը մեծ և զգալի եղաւ։ Հանրապետութիւն բառը միանգամ սահմանադրութեան մէջ մտնելուց յետոյ, տատանուող և երկբայող երեսփոխանները մեծ մասամբ անցան հանրապետութեան կողմը և յաջողեցրին նորա գործը։

Հանրապետութեան յաղթութիւնը ամենից աւելի զգալի եղաւ Բոնապարտեաններին, որոնք ամենայն զօրութեամբ հակառակելով դորան կայսրութեան գործը յաջողված էին երազում արդէն և Նապոլէոն IV-ին կայսրութեան գահը պատրաստում։ Սակայն այս բոլորը դարձաւ յետաձգվեցաւ և մինչև անգամ լրացուցիչ ընտրութեան ժամանակ նոցա կանդիդատները երկու դեպարտամենտում մերժվեցան։

— Ծերակոյտի կազմակերպութեան հարցը, ազգային ժողովի քննութեանը ենթարկվելով, հակառակ սահմանադրական յանձնաժողովի ցանկութեան, մի ամենանշանաւոր փոփոխութեան ենթարկեցաւ. կառավարութեան և միապետականների ցանկութիւնն էր բոլոր ծերակոյտը կազմել այնպէս, որ նա միշտ իւրեանց ձեռին խաղալիկ դառնայ. ուստի և նոքա առաջարկում էին տալ հանրապետութեան նախագահին ծերակոյտի անդամներ նշանակելու իրաւունքը։ Իսկ ազգային ժողովը Պասկալ Դիւպրայի առաջարկութեամբ բազմութեամբ 322 ի 310 ի դէմ որոշեց կազմակերպել ծերակոյտը ընդհանուր ընտրութեամբ, ինչպէս և կազմակերպվում է ազգային ժողովը ինքը։ Այս որոշումից յետոյ յանձնաժողովի նախագահը խնդրեց յետաձգել նախագծի քննութիւնը, որպէս զի յանձնաժողովը կարևոր փոփոխութիւններ անէ իւր նախագծի մէջ։ Կառավարութիւնը պաշտօնապէս յայտնեց, որ նա չէ համակրում ժողովի ընթացքին, թէև չէ կամենում խառնվել նորա գործի մէջ։ Յանձնաժողովը Դիւպրայի հետ ի միասին արաւ փոփոխութիւնք իւր նախագծի մէջ և առաջարկեց ժողովին։ Ժողովը ընդունեց նախագծի առաջին յօդուածը, որով ամեն մի դեպարտամենտ ընտրում է երեք անդամ ծերակոյտի, ապա մի քանի յօդուածներ ևս ընդունելուց յետոյ մերժեց ամբողջ նախագիծը։

— Սորանից յետոյ առաջարկվեցաւ ազգային ժողովը լուծելու հարցը, որի անհրաժեշտութիւնը մերժվեցաւ 407 ձայնով 266 ի դէմ։

— Վօդրէնը և Վադդինգտոնը առաջարկեցին նոր նախագծեր ծերակոյտի մասին, որ յանձնեցին յանձնաժողովին։

— Սահմանադրական օրէնքներին հանրապետական ուղղութիւն տուողն էր, ինչպէս յայտնի է, Անրի Աղէքսանդր Վալլօնը, որի անուամբ և կոչվում է այդ սահմանադրութիւնը։ Աւելորդ չենք համարում Վալլօնի համառօտ կենսագրութիւն ներկայացնել մեր ընթերցողներին։ Անրի Աղէքսանդր Վալլօնը ծնուել է դեկտեմբերի 28-ին 1812-ին, սա անդամ է Գաղղիայի ինստիտուտի (գիտութեանց ճեմարանի) և ուսուցիչ պատմութեան ֆրանսիական կօլլէժում։ Վալլօնը ստացել է իւր ուսումը Նորմալ կոչուած ուսումնարանում, ուր յետոյ րէկտօր էր։ Սորանից յետոյ նա տեղակալ էր Գիզոյի Սորբոնում։ Փետրուարի յեղափոխութիւնից յետոյ նրան նշանակեցին գործավար այն մասնաժողովի, որ քննում էր ստրկութեան բառնալու հարցը, իսկ 1869 հիւսիսային դեպարտամենտը ուղարկեց նորան պատգամաւոր ազգային ժողովը։ Բայց իւր կոչումից նա հրաժարուեց ևս մայիսի 31 հրատարակուած այն օրէնքի առթիւ, որ կարճացրեց ընդհանուր ձայնակցութեան իրաւունքը, ժողովի իրաւասութիւնից դուրս համարելով։

Վալլօնը գրականութեան մէջ յայտնի է իւր «քաղաքային աշխարհագրութեամբ նոր ժամանակների, ստրկութեան պատմութեամբ նոր ժամանակների, Յովհաննա դ՝ Արկի պատմութեամբ, որոյ համար նա ստացաւ պարգև։ Ամենանշանաւորը նորա երկասիրութիւններից համարելի է „Լուդովիկոս Սուրբն և նորա ժամանակը“։ Սա ունի մի գրուածք ևս Ռենանի դէմ։

Ազգային ժողովում Վալլօնի անունը ոչ մի կուսակցութեան ցուցակում մտած չէ թէև նա միշտ աջ կենդրոնին կայնակ էր լինում։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Պարոն Ակնատեսը Դերբէնտից հաղորդում է ցաւելով, որ Դուբայու ազգային դպրոցը փակուել է. թէև միակ մնացած և դպրոցը ոտք չը դնող գանձապահ—հոգաբարձուն ու օտարահպատակ ուսուցիչը փակման յանցանքը դնում են երեցփոխանի եկեղեցական գումարների տուկոսիքը չը տալու վերայ. բայց այս սխալ է. դպրոցը փակված համարելի էր վաղուց հոգաբարձուի անհոգութիւնից և ուսուցչի անվայել ընթացքից նորա մէջ։ Իսկ երբ Շամախու վիճակային իշխանութիւնը օրինաց պահանջման համաձայն հեռացնելով օտարահպատակ ուսուցչին նշանակեց նորա փոխարէն Շուշեցի Սմբատ Ղալաբէկեանցին, վերոյիշեալ հոգաբարձուն և ուսուցիչը փակում են դպրոցը։ Այսպէս դպրոցը եսականութեան զոհ է լինում, և ոչ դրամական պակասութեան։

—

«Кіев. Телегр.» լրագրում կարդում ենք հետեւեալ զարհուրելի լուրը. Կիրիլեան բարեգործական հաստատութիւնում, գրեթէ ամեն տարի տեղի են ունենում դժբաղդ դէպքեր այնտեղ ապաստանած հիւանդների մէջ։

1873 թուականին մի խելագար սպանեց միւսին, տալով սորա գլխին հարուած երկաթեայ բահով։ Մի քանի ամսից յետ քանդվող պատը իւր տակը թաղեց երկու նոյնպիսի թշուառներուն։ Վերջապէս 1874 թուականը վերջացաւ այդ հաստատութեան մէջ աւելի զարհուրելի դէպքով։ Մի խելագար, որ նոյն օրը տեղաւորած էր վիրահատական դահլիճում, երեկոյեան, երբ ծառաները հեռացել էին սենեակից մերձեցաւ իւր դրացու անկողնակալին, յարձակեցաւ նորա վերայ և սկսաւ կրծել նորա կոկորդը։ Թուլացած հիւանդի յուսահատական աղաղակը, որ հայցում էր օգնութիւն, չըգրաւեց ուշադրութիւնը նոցա, որոնց վերայ պարտք կայ հսկելու հիւանդներին։ Արդէն կոկորդը կրծած է, արիւնը աղբիւրի պէս հոսում է, մեռնողի կերպարանքը աւելի ևս շարժում է խելագարի կատաղութիւնը։ Վերջինը կրծած կոկորդի միջով դուրս է քաշում լեզուն և ուտում է։ Երևակայեցէք դրութիւնը երկու անօգնական հիւանդների, որոնք գտնվում էին նոյն դահլիճում, և որոնք վկայ էին այս դէպքին, երբ կատաղած մարդակերը յարձակեցաւ նոցա վերայ։ Երևեցաւ, որ նոքա աւելի կարող են եղել դիմադրելու, նոցանցից մէկը մնաց միայն առանց քթի. իսկ միւսը վէրք ստացաւ ձեռքի վերայ։ Այս դէպքի առթիւ վարչութիւնը քննութիւն է նշանակել։ Հաւանական է, որ չունող պաշտօնական յայտարարութիւնից կ'իմանանք քննութեան հետևանքը»։

—

Սամարիայից գրում են «Бирж. Вѣд.» լրագրին, որ նորերումս նշանակած էր հարսանիք մի այրի վաճառականի երիտասարդ օրիորդի հետ, նոյնպէս վաճառականի ընտանիքից։ Երբ արդէն պատրաստ էին կատարելու պսակի ծէսը, նորահարսը փախել է միւս եկեղեցի և այնտեղ պսակուել է միւս իւր ընտրած մարդու հետ։

—

Վրաց Դրօէբայ լրագրի 20 որդ համարի առաջնորդող յօդուածում պ. յօդուածագիրը խօսելով առ հասարակ ամուսնութեան և ամուսինների պարտականութեանց մասին՝ առաջարկում է երկու սեռի ներկայացուցիչներին էլ չը կորցնել ժամանակ և ընտրել սրտի ուզածը ամուսնական կապով կապուելու։

—

Ամսոյս 18-ին երեկոյեան 8 ժամին Սօլօլակում պ. Ծովյանեանի տանը հրդեհ եղաւ։ Կրակը երևեցաւ վերին յարկում և ասում են թէ առաջացել է բուխարից, երբ տանը ոչ ոք չը կար և այն սենեակի դռները կողպած էին։ Տանը շատ կարասիք և իրեղէններ փչացել կոտրուել էին և անյայտացել։

Տունը ապահոված էր։

—

Ռուսաստանի գաւառական քաղաքների մէկի մէջ լրագրի թղթակիցների դէմ որոգայթներ են լարել։ Պատմում են թէ նոյն գաւառի վարչութիւնը գաղտնի կերպիւ պարտաւորել էր ոստիկանութեանը գտնել և իմանալ թղթակիցների ազգանունները. բայց ոստիկանութիւնը այդ գաղտնի ասած միտքը չէր կարողացել ծածուկ պահել։

—

Յունվարի 29 Օլմիւցի բանտի գաւթում դատարանի վճռով կախեցին Ֆրեյդ անունով մի երիտասարդ, որ Բօհեմիայի երկաթուղում սպանել էր մի մարդ։ Աւստրիայում վաղուց է մահապատժի պատիժ չէր գործ դրուած։

—

Պարոն Գ. Տէր Յ. Սանդխեանցը հաղորդում է, որ անցեալ տարուան Մշակի 50 համարում հաղորդած լուրը Նոր Նախիջևանի դպրանցի բացման մասին սխալ է եղել. նոյեմբերի 5 դպրանոցի մասին ոչինչ որոշ չէ եղած.. այլ ներկայ ամի յունվարի 2 ին միայն ստացվել է Նորին Վեհափառութիւնից կոնդակ Թեմական հոգևոր դպրոցի բացման մասին։ Իսկ թէ երբ կը բացուի դպրոցը, ինչ ընթացք կունենայ նա, ով կը լինին նորա մէջ գործող անձինք՝ դեռ ևս անյայտ են. նա մանաւանդ որ արգելքներ շատ են առաջ գալիս թէ հանգամանքներից և թէ բարեմիտ անձինքներից։

—

Անցեալ կիւրակի գիշերուան 10 ժամին Թիֆլիսի Սօլօլակի թաղում մի ոստիկան ի մահ վիրաւորվում է դաշոյնով։ Վիրաւորածը մինչև հիւանդանոց տանելը վախճանվում է։ Ասում են, որ սպանողը բռնած է։

—

Քաղաքս հասաւ ճապօնական մի խումբ Նակին-Նակիչի առաջնորդութեամբ և տալիս է մարմնամարզական ներկայացումներ Երևանի հրապարակի վերայ։

—

Անգղիական կառավարութիւնը ունի դիտաւորութիւն առաջարկելու պարլամէնտին, որ սա կրկին ընդունէ գործադրութիւնը մարմնաւոր պատիժների, որովհետև չը կայ այլ կերպաւ միջոց առաջը առնելու այն հակամիտութեան դէպի ամենակոպիտ բռնութիւնք, որ տարածված է շատ ժողովրդեան մէջ։

—

Վիեննայի լրագիրները հաղորդում են հետաքրքրական անցկութիւնք փոքրիկ Սան-Մարինօ (Միջին Իտալիայում) հասարակապետութեան վերայ, որինոր չը նայելով, որ շրջապատած էր միապետական տէրութիւններով, կարող եղաւ պահպանելու իւր անկախութիւնը, որ յարգեց մինչև անգամ Իտալիան իւր ազգային միութիւնը գլուխ բերելիս։ Սան-Մարինօ հասարակապետութիւնը կառավարում են երկու հիւպատոսներ, որոնք ընտրվում են վեց ամսի ժամանակով։ Առաջին հիւպատոսը (քաղաքապետ) նուիրում է իւր գործունէութիւնը քաղաքի գործերին, իսկ երկրորդը (գիւղապետ) պարապած է գիւղերի բնակիչների վիճակով, Պատգամաւորաց ժողովը բաղկացած է 50 անձինքներից, որ չափաւ շատ է մի տէրութեան համար, որոյ բնակչաց թիւը 8000 է։ Զօրքը՝ որ բաղկացած է 400 հոգուց, բաժանվում է երկու մասը՝ մինը ազնուականաց թիկնապահ և միւսը քաղաքացի զունդը։ Հասարակապետութեան քաղաքացիք, որոնք պարտաւորած չեն ոչ բազմաթիւ զօրք պահելու և ոչ էլ շատ եկեղեցական պաշտօնեայք, տալիս են շատ աննշան հարկ և ապրում են բարօրութեան մէջ։

—

Յունվարի 16 ին 4 ժամին կէսօրից յետ Կիևի համալսարանի բժշկական մասի չորրորդ դասատան ուսանող Սոլոմոն Կոլէսնիկը դուրս գնաց տնից հին չուխով, թողնելով իւր սենեակում տոմսակ հետևեալ բովանդակութեամբ։

Ինքնասէր և միևնոյն ժամանակ կասկածոտ մարդը չը պէտք է ապրի. կեանքը նորա համար լոկ տանջանք է։ Մնաք բարեաւ, ով ծնողներ և բարեկամներ։ Բարեկամներ ես բաւական ունէի. բայց ես ինքս երբէք չեմ եղել մտերիմ բարեկամ։ Մտերիմ բարեկամը միշտ պէտք է պատրաստ լինի զոհելու. բայց ես այդ չէի կարողանում. ուստի և ես ինձ եմ բերում զոհ։ Կեցցեն բոլոր բարի մարդիկ։ Ս. Կոլեսնիկ։

ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալէքսանդրապօլ պ. Համբոյ Ափարին։ Ձեր գրդին պաս պահելու մասին՝ խմբագրութիւնս անկարող գտնուեցաւ որ և իցէ դարման տալու, ուստի ձեր նամակը այդ առթիւ չըտպեց։ Ձեր միւս գրուածքը յայտնեցէք, կարելի է խմբագրութիւնս նոցա համար մի դարման գտնէ։

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՓԵՏՐՎԱՐԻ 22-ին

Ոսկին (պօլուիմպերեալ)...	5	90
Արծաթը (հին մանէթ)...	1	12
Հին աբասան. (5 հատը)	1	7
Փոխանակագիր Պօլսում վճարելիք Օսմանեան լիրա...	6	63
Փոխանակագիր Պարսկ.	4	50
„ „ անգղիական լիրան.	7	18
Լատարի բիլեթն առաջին	189	„
Երկրորդը.........	188	„
Բամբակը Երևանի......	4	80
Ամերիկ. սերմ....	6	70
Տորոնը տեղական.........	8	55
Որդան կարմիր առաջինը	132	20
„ „ Երկրորդն.......	98	30
Մետաքսը Նուխու լաւ.	138	„
„ „ Իմէրեթու.......	122	20
Բուրդը Թուշու...........	6	40
Թարաքամի......	4	10
Շաքարը ռաֆ.............	6	55
Աստրախանեան	7	70
Շաքարաւազը.........	6	90
Ծխախոտը Տրապիզոնի լաւն	15	55
Սամսոնը 10-ից	50ը	„
Կեօբակի 25-ից	75ը	„
Բօխչայի 15-ից	55ը	„
Սուրճը Մօկկոյի.........	20	10
Լեօնզ. (հասար.)	17	25
Մոմը բնաճարպի (ստէար.)	10	10
Ճրագուի.........	5	„
Երկաթը ձողաձև (ռուսկ)	3	30
Տախտ. (լիստով.)	2	70
Մեխացուն......	3	20
Ցինկ........................	5	90
Պղինձը անգղիու.........	13	40
Տեղական.........	10	50
Անագը (կլայեկ).............	13	40
Անուշադիրը (նիշադ.)	7	30
Աղը հասարակ..............	„	75
Պղպեղը......................	11	„
Լեղակը առաջինը.........	11	„
„ „ Երկրորդն.........	7	60
Ալիւրը հասարակ.........	1	5
Պետանովի (չվալը)	18	„
Ախվերդովինը 1,	13	„
2,	10	20
3,	9	75
Բրոդսկի ալիւր...	14	40
Բրինձը Լանքորանի......	2	75
Գարին........................	„	65
Սպիրտ 83 աստիճանի...	6	69
Նաւթը........................	2	60
Օճառ (սապոն)............	2	80
Իւղը..........................	12	„
Ձէթը կտաւատի.........	4	„
Կնճիթի (քունջութի)......	6	40
Շիբն........................	2	45
Գդոորն......................	6	75
Արճիճն......................	2	75
Մեղրամոմ..................	24	„
Խունկն......................	8	„
Զաղն........................	1	40
Վերմիշել եւ մակ. Ռուս.	6	40
Օդեսու.........	5	50
Տեղական.........	4	60
Սագոյ ալիւրակն	4	50
Գրեչիշնի.........	2	10
Գերլովկի.........	5	20
Կրուպայ Մաննիյ.........	3	10
Կրուպչատկան Ա. Բաբուսսովինը եւ ընկ. № 1)	13	10
№ 2)	8	20
№ 3)	7	20

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Փոստը

ՌՈՒՍԱՍՏԱՆ, ՍԻԲԻՐ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Բոլոր տեղերը, (բացի Պարսկաստանից և Ասիական-Տաճկաստանից) գնում է ամեն օր բացի կիրակի օրից։

ԵՐԵՒԱՆ — Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։
ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ — Չորեքշաբթի և ուրբաթ։
ՆՈՐԲԱՅԱԶԷԹ — Չորեքշաբթի։
ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹ. ՎԵՐԱՅ ԳՏԱՆՎԱԾ ՏԵՂԵՐԸ — Ամեն օր, բացի կիրակի։
ԶՈՒԳԴԻԴ — Չորեքշաբթի։
ՕԶՈՒՐԳԷԹ — Երկուշաբթի և ուրբաթ։
ԱԽԱԼՑԻԽ — Երկուշաբթի և ուրբաթ։
ԲՈՐՋՈՄ — Երկուշաբթի և ուրբաթ. իսկ մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 15-ը ամեն օր բացի կիրակի օրից։
ԲԵԼԻ-ԿԼԻՉ (Աղշտաֆա) — Երկուշաբթի և ուրբաթ։
ԲԱՔՈՒ (Եղիսա-վէտպոլի վրայ) — Երկուշաբթի, հինգշաբթի և ուրբաթ։
ՆՈՒԽԻ, ՑԱՐՍԿԻ-ԿՈԼՈԴՑԻ (Թելաւ-Սիղնաղի վրայ) և ԶԱՔԱԹԱԼԱ, ՍՂՆԱԽ, ԹԵԼԱՒ և ԼԱԳՕԴԵԽ։ — Երկուշաբթի և շաբաթ։

—

ՓՕԹԻ—ԹԻՖԼԻԶԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

ԹԻՖԼԻԶԻՑ գնում է ճանապարհորդների գնացքը առաւօտեան 8 ժ. 18 ր. և հասնում է ԽԱՇՈՒՐ 1 ժ. 11ր. և ՓՕԹԻ գիշերուայ 11 ժ 27 ր. Խառն գնացքը գնում է՝

ԹԻՖԼԻԶԻՑ երեկոյեան 8 ժ. 17 ր. և հասնում ԽԱՇՈՒՐ առաւօտեան 4 ժ. 30 ր։

ՓՕԹՈՒՑ գնում է ճանապարհորդների գնացքը առաւօտեան 7 ժ. 38 ր. եւ հասնում ԽԱՇՈՒՐ 5 ժ. 11ր և ԹԻՖԼԻԶ գիշերուայ 10 49 ր.։

ԽԱՇՈՒՐԻՑ առաւօտեան 7 ժ. 15 րոպ. և, հասնում է ԹԻՖԼԻՍ 3 ժ. 13 ր. ճաշից յետ։

—

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ (Մուզէում) բաց է Երեքշաբթի, Ուրբաթ և Կիրակի օրերը առաւօտեան 10 ժամից մինչև կէս օրից յետ 3 ժամը։

—

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ երթևեկ հիւանդների համար գտնվում է Սեմինարիայի դիմացը Յ. Ձիթախեանի տանը: Հիւանդներին ընդունում են ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է Տփխիսի գրավաճառների մօտ
Ղազախեցու

„ԴԱՎԻ—ԴԱՌԱԲՍ.“

(Գիւղական թատրոն չորս գործողութեամբ)
(Յաւելուածով)
ԳԻՐՔԸ.

Գինն է 50 կոպ. իսկ հարիւրներով գնողների համար՝ 30 կ.

Օտարաքաղաքացիք կարող են գրել ուղղակի „Մշակի“ խմբագրութեանը կամ մեզ այս հասցէով.— Въ г. Тифлисъ Григорію Папянцу, ученику Армянской Нерсесянской Семинаріи

Դուրս եկաւ մամուլի տակից

„ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

անունով լիակատար երգարան, որն բովանդակում է իր մէջ Ազգային, տեղական և եկեղեցական երգեր և տաղեր թւով 270:

Նորա մէջ գտնվում են գրեթէ այն ամեն թէ տպագրուած և թէ անտիպ երգերն, որոնք արդէն ժողովրդականութիւն են ստացած և երգվում ամեն տեղ:

Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ռուբլի։

Ծախվում է Բագուայ Մարդասիրական ընկերութեան գրադարանում և պ. Գրիգոր Գիլզարեանցի թէյի խանութում ի Բագու, իսկ Թիֆլիսում պ. Վարդանեանցի և ընկ. գրավաճառանոցում:

Ցանկացողները կարող են գրել կամ յիշեալ տեղերը կամ թէ դէպի „ՍՈԽԱԿԻ“ հրատարակիչը այս հասցէով. Въ Баку Аваку Лазаревичу Григорьеву въ Армянскомъ училищѣ.

Մեղուի խմբագրատանը վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը,

ա).

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

1) "ԱՇՏՕՆԻ ԸՆՏԱՆԻՔ„, թարգմանութիւն Տ. Ն. Ա. գինն է 20 կ.

2) „ՍԷՐ ԵՒ ՄԱՀ„ ողբերգութիւն, հեղինակ. Գ. Բարխուդարեանի, գինն է 40 կ.

3). «ԲԼՕՄԷԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ», թարգմանութիւն Ա. Նահապետեանի, գինն է 40 կ.

4). «ԵՐԿՈՒ ԲՈՅՐ», վէպ Գիւղական կեանքից. հեղինակ. Ղ. Աղայեանի, գինն է 50 կ.

5). "ՄՇԱԿ„ (պատկեր) գործ Ա. Բէշմիշեանի. գինն է 5 կ.

6). ՀԱՄԱՌՕՏ ՀԱՅԵՑԵՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ, գործ. Հ. Դուկասեանի. գինն է 10 կոպէկ։

բ).

ՅՕԴՈՒՏ Ս. ԴԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ.

7). ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՎԵԶՈՒՎԵԱՆ ՀՐԱԲՈՒԽ ՍԱՐԻ ՎԵՐԱՅ, հեղինակ. Վ. Խօջայեանի, գինն է 1 ռուբ.

8). ՎԻԼԼԷՒ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ, թարգմանեաց Օր. Գ. Յովհաննիսեան, գինն է 30 կ. (ուսումնարաններին համար 20 կոպ.)

գ).

ՏԳ. 'Ի ԹԷՈԴՈՍԻԱ։

9). ՋԷՆԻԱԹ—ԴԷՆԻԱԹ, (դրամա չորս արարուածով) և ՄԵՌՆԻՄ ԻՐԵՆ ԽՈՍՏՑԵՐ ԵՄ, (վօդէվիլ չորս արարուածով գործ" Յ. Գէղամեանի) գինն է 50 կ.

դ).

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

10) ՎԻԼՀԷԼՄ ՏԷԼԼ-Շիլլէրի, թարգմ. պ. Բարխուդարեանի։ Գինն է՝ ընտիր թղթի վերայ—1 ռ. 20 կ. և հասարակ թղթի վերայ 1 ռ.

Ներսիսեան Հայոց Ազգային—Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը նշանակում է աճրդախօսութիւն (տօրգ) և երեք օրից յետոյ կրկնաճրդախօսութիւն (պերետօրժկայ) կապալու (իջարայով) տալու նոյն դպրոցի կրպակը՝ ընծայած Գրիգոր Շերգիլեանցից, որ գտնվում է միջին փողոցում։ Պայմանաթուղթը (կանդիցեան) ցանկացողքը կարող են կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակէից և տօներից, առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամն կէսօրի, և աճրդախօսութեան և կրկնաճրդախօսութեան օրը ներկայանալ նոյն դպրոցում հոգաբարձութեան խորհրդարանի մէջ գրաւականաւ, որ պիտի լինի կամ Արքունական անուանի բիլէթ և կամ առ ձեռն դրամ (նաղդ փող) համաձայն պայմանաթղթին։ Աճրդախօսութիւնը լինելու է 1875 թուականի մարտ ամսոյ 13-ին և կրկնաճրդախօսութիւնը նոյն ամսոյ 17-ին երեկոյեան 6 ժամից ց9 ժամն:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 21-го ФЕВРАЛЯ 1875 г.
Типографія А. Энфіаджіанцъ и К-о
Տուն Բժշկապետ Մ. Ռօտինեանցի.